մեջ հորից որդի ժառանգաբար անցած էր լուսնոտությունից բժշկելու շնորհքը և այնտեղ նրան կտրել էին տալիս դրամը մահիկի ձևով։ Մահիկի ձև էր տրվում նաև անասունի—եզան, կովի, գոմեշի, երբեմն և ձիու վզից կախվող հմայիլին՝ դաղդղանին[67], որով այդ անասունը պահպանվում էր չար աչքից։ Նույնպես չարչարանաց շաբաթվա Ուրի ուրբաթ օրը շինած պողպատե կիսալուսնին վերագրվում էր չար աչքից և կայծակից պահելու զորություն։ Այդ պողպատը, չախմախը, ինչպես և ուրիշ նույնաձև հմայիլները դնում էր նրան կրողին լուսնի մահիկի հովանավորության տակ[68]։ Սակայն, Զանգեզուրի հմայիլների մեջ մահիկն այն ընդարձակ գործադրությունը չուներ, ինչ որ նա ունեցել է Հարավային Հայաստանի գավառներում, օրինակ՝ Վանա ավազանում և նրանից ավելի հարավ, որտեղ այդ մահիկները, կամ նօրէրը զարդարում էին և՛ գոտիների ճարմանդները, և՛ գլխի թասերը, և՛ ապարանջանները։ Վանում մահիկները մեծ քանակությամբ կախված էին լինում զանազան զարդերի վրայից, նույնիսկ կրծքին կախվող լոխի՝ մեդալիոնի[69] ձևով։ Այս դեպքերում, ինչպես տեսնում ենք, Վասպուրականում մահիկներին տրվում էր շատ ընդարձակ իմաստ, այն է՝ բազմածին դարձնելու և բեղմնավորելու զորություն։ Այս ունակությունն անշուշտ շաղկապված է կնոջ ամսականների հետ, որոնցից կախված է և նրա զավակ ունենալու ընդունակությունը[70]։ Զանգեզուրում լուսնի պաշտամունքը նման խորություն չուներ։

Զանգեզուրում նույնպես, ինչպես և հայաբնակ ուրիշ շատ գավառներում, պատմվում էր այն ավանդությունը, թե արևը ամոթխած աղջիկ էր, իսկ լուսինը՝ համառ տղա։ Մայրն ասեղներ է տվել արև աղջկան, որ նա իրեն նայողի աչքերը ծակծկի և համեստությունը միշտ պահպանի։ Մայրը գաթայի խմոր հունցելիս ձանձրացել էր տղայի աղաչանքներից՝ իրեն գաթա տալու և դրա համար ապտակել էր տղային։ Այնուհետև նրա դեմքին մնում են այդ ապտակի հետքերը՝ լուսնի բծերը։ Այս ավանդությունը ոչ թե որևէ պաշտամունքի անդրադարձում է, այլ սոսկ մի ժողովրդական բացատրություն, թե ինչո՞ւ մարդ չի կարող նայել արևին, կամ ինչո՞ւ լուսնյակի երեսին բծեր կան։

ՖԱԼԼՈՍԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Ֆալլոսի[71] պաշտամունքը տարածված է եղել Հայկական լեռնաշխարհի զանազան կողմերում։ Քարից շինած ֆալլոսների մի քանի օրինակներ գտնված են Էջմիածնում, Երևանում, Դվինում և այլ վայրերում (երբեմն պատվանդանով)։ Դրանցից մի քանիսը տեղափոխված են Հայաստանի Պատմա-

---

[67] Դաղդղանը պատրաստվում էր բոշնի սրբաղան ծառից, որին վերագրվում էր մոգական ազդեցության ուժ։

[68] Հայելին, պսպղուն, տափակ դրամներ, որոնց մոտենալով հիվանդություն կամ այլ վտանգ սպառնացող չար ոգին, տեսնելով իր պատկերը, պիտի հեռանա, խաբվելով, որ ինքը կամ իր ընկերը արդեն այդտեղ եղած է։ Այս դեպքում ընդօրինակությունը և պատկերը փոխարինում են իրը կամ երևույթը։

[69] Այսպիսի զարդ-հմայիլ՝ նօր՝ նորալուսին գտնված է ուրարտական պեղումների ժամանակ՝ մի բրոնզե լոխի բևեռագիր աղոթքով։ Б. Б. Пиотровский, նշված աշխ., էջ 168, նկար. 30։

[70] Այս կարգի նախնական լուսնապաշտության ուշ ժամանակվա մնացորդ կարելի է համարել և այն, որ Ռաֆայելի Սիկստինյան մադոննան ներկայացնում է մի ոտքը կիսալուսնի վրա դրած։

[71] Արական սեռանդամի։